Հանրության իրազեկվածությունը Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների մասին. ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորված ելակետային հետազոտությունը կնպաստի հանրության իրազեկման արդյունավետ ռազմավարությանը

ԵՐԵՎԱՆ, 20/06/11, 12:00. Այսօր ԱՄՆ ՄԶԳ կենսաթոշակային և աշխատաշուկայի բարեփոխումների ծրագիրը (ԿԱԲԾ) «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» խորհրդատվական ընկերության հետ համատեղ ներկայացրեց Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության իրազեկվածության ելակետային հետազոտության արդյունքները: «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում տեղի ունեցած միջոցառմանը ներկա էին ՀՀ կառավարության, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հայաստանում գործող բաշխողական կենսաթոշակային համակարգը ֆինանսապես անկայուն է, որտեղ բացակայում է հիմնավոր կապը համակարգին կատարած վճարումների և ապագա կենսաթոշակային եկամտի միջև: Սա լուրջ հակախթան է գործող համակարգին քաղաքացիների միանալու համար: Այս խնդրի լուծման նպատակով Հայաստանի կառավարությունը ձեռնամուխ է եղել կենսաթոշակային համակարգի բարեփոխմանը՝ ներդնելով կամավոր և պարտադիր կուտակային բաղադրիչները, որպեսզի համակարգը դառնա ֆինանսապես կայուն և ապահովի եկամուտների համապատասխան մակարդակ՝ կենսաթոշակի անցնելիս: Բարեփոխման գործընթացը պահանջում է շարքային քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների մտածելակերպի, վերաբերմունքի և վարքագծի արմատական փոփոխություններ, որին ՀՀ կառավարությունը նախատեսում է հասնել հանրային իրազեկման և կրթության քարոզարշավի միջոցով:

ՀՀ կառավարության ջանքերին աջակցելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ ԿԱԲԾ-ն պայմանագիր է կնքել «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» խորհրդատվական ընկերության հետ, որը մշակել և ՀՀ 16 և բարձր տարիքի գյուղաբնակ և քաղաքաբնակ 992 քաղաքացիների շրջանում անց է կացրել հետազոտություն: Վերջինս քաղաքականություն մշակողներին թույլ կտա առավել արդյունավետ և հասցեական կազմակերպել հանրային իրազեկման քարոզարշավը, միաժամանակ բարձրացնելով հասարակության ֆինանսական գրագիտության մակարդակը:

Հետազոտությունը պատասխանում է այնպիսի առանցքային հարցերի, ինչպիսիք են՝ կենսաթոշակային ներկա համակարգի և առաջիկա բարեփոխումների վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը և վերաբերմունքը, կենսաթոշակների վերաբերյալ մտահոգությունն ու հարցվածների տեղեկատվության ստացման աղբյուրները: Ըստ հետազոտության, հարցվածների միայն 46%-ն էր ծանոթ գործող կենսաթոշակային համակարգին և նրանցից ընդամենը 27%-ը գիտեր, որ գործող համակարգը բաշխողական է: Հարցվածների ընդամենը 0.9%-ը գիտեր գործատուի և աշխատողների կողմից

կատարվող սոցվճարների ճիշտ չափը: Հարցվածների 36%-ը լսել էր կենսաթոշակային բարեփոխումների մասին, իսկ 39%-ը պատրաստակամություն էր հայտնել միանալու կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին: Որպես տեղեկատվության նախընտրելի աղբյուր՝ հեռուստատեսությունը ստացել էր ձայների մեծամասնությունը (90%-ից քիչ ավել), որին հաջորդում էին թերթերն ու ամսագրերը (19-21%), և վերջում՝ հարազատներն ու ծանոթները (հարցվածների 14-19%-ը):

# # #

ԿԱԲԾ-ի մասին. ԿԱԲԾ-ն ԱՄՆ ՄԶԳ-ի հիմնական ծրագիրն է, որի նպատակն է աջակցել անհատներին, տնային տնտեսություններին և համայնքներին՝ առավել արդյունավետորեն կառավարելու սոցիալական ռիսկերը կամ կարիքները, օժանդակություն տրամադրելու զբաղվածների և գործազուրկների խոցելի խմբերին (մասնավորապես՝ սահմանափակ հմտություններ ունեցողներին, կանայնց և հաշմանդամություն ունեցող անձանց), և ավելի մեծ ուշադրություն հատկացնել համընդհանուր տնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը: ԱՄՆ ՄԶԳ ԿԱԲԾ-ն տեխնիկական օժանդակություն և աջակցություն է տրամադրում մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման նպատակով և կենտրոնացած է սոցիալական պաշտպանության երկու առանցքային ոլորտների՝ կենսաթոշակային և աշխատաշուկայի բարեփոխումների իրականացման և վրա:

Գործող կենսաթոշակային համակարգին ԻՐԵՆՑ ԾԱՆՈԹ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ հարցվածների...



Այն, որ գործող կենսաթոշակային համակարգը ԲԱՇԽՈՂԱԿԱՆ է՝ գիտեն հարցվածների...



Հարցվածների ընկալմամբ, գործող կենսաթոշակային համակարգի թիվ **1** խնդիրը կենսաթոշակների ՑԱԾՐ ՄԱԿԱՐԴԱԿՆ է: Այդպես են կարծում հարցվածների...



Կենսաթոշակային ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼՍԵԼ ԵՆ հարցվածների...



ԿՈՒՏԱԿԱՅԻՆ կենսաթոշակային համակարգի ՄԱՍԻՆ ԼՍԵԼ ԵՆ հարցվածների...



Հարցվածների վերաբերմունքը կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին



- Կենսաթոշակային բարեփոխումների մասին ավելի տեղյակ են՝
  - Ըստ սեռի՝ տղամարդիկ
  - Ըստ տարիքի՝ նախակենսաթոշակային տարիքային խումբը (41-62 տ)
  - Ըստ կրթական մակարդակի՝ ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողները
  - Ըստ բնակության վայրի՝ Երեւանի բնակչությունը

- Կենսաթոշակային բարեփոխումներին ավելի կողմ են՝
  - Ըստ սեռի՝ տղամարդիկ
  - Ըստ տարիքի՝ ավելի երիտասարդները
  - Ըստ կրթական մակարդակի՝ ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողները
  - Ըստ բնակության վայրի՝ գյուղերի բնակչությունը

- Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հարցում ավելի պատրաստակամ են՝
  - Ըստ սեռի՝ տղամարդիկ եւ կանայք՝ առանց տարբերության
  - Ըստ տարիքի՝ ավելի երիտասարդները
  - Ըստ կրթական մակարդակի՝ առանց տարբերության
  - Ըստ բնակության վայրի՝ գյուղերի բնակչությունը